

**Հանրային դպրոցների աշակերտները կգարգացնեն կյանքի համար
կարևոր ձեռնարկատիրական հմտություններ**

Հայաստանի հանրակրթական դպրոցների աշակերտներն այժմ ձեռնարկատիրական կրթություն կստանան «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության հետևողական աշխատանքի և HSBC բանկի երկարաժամկետ ֆինանսական աջակցության շնորհիվ:

2017-2018 թթ. ուսումնական տարում Հայաստանի հանրակրթական դպրոցներում անցկացվում է ձեռնարկատիրության դասընթաց, որը երկրորդ և երրորդ դասարանների ուսումնական ծրագրի տեխնոլոգիա առարկայի մասն է: Մշակվել է ուղեցույց ուսուցիչների համար, և ավելի քան 1400 ուսուցիչ վերապատրաստվել է նոր առարկան դասավանդելու համար: 215 դպրոցների տասներորդ և տասնմեկերորդ դասարանների ընտրված աշակերտները նույնպես կշարունակեն ձեռնարկատիրական կրթությունը: Ծրագիրը պաշտոնապես հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից և ներառված է դպրոցական ծրագրում: Այս տարվա փորձի հիման վրա առարկան կներառվի բոլոր դպրոցների ուսումնական ծրագրում:

Ձեռնարկատիրության դասընթացը նախատեսված է բոլոր աշակերտների համար, անկախ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից, որն էլ կօգնի նրանց զարգացնել ձեռնարկատիրական գիտելիքներն ու գործնական հմտությունները՝ ֆինանսների կառավարման ոլորտում և մրցակցային աշխատաշուկայում հաջողակ լինելու համար: Ծրագիրը խրախուսում է, որպեսզի աշակերտները լինեն ստեղծագործ ու նորարար, զարգացնում է նրանց տրամաբանությունն ու դատողությունը, հղկում է համագործակցային հմտությունները՝ ապագայի մարտահրավերները հաղթահարելու ու հնարավորություններից օգտվելու համար:

Համատեղ նախաձեռնության համար հիմք է ծառայել «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության ծրագրի հաջող փորձը, որին մասնակցել են Հայաստանի անապահով համայնքների աշակերտներն ու ուսուցիչները: HSBC-ն ֆինանսական աջակցություն է ցուցաբերել այս ծրագրի իրականացմանը՝ օգնելու աշակերտներին հասկանալ բիզնեսի կարևորությունը հասարակության մեջ և սեփական ներդրումն ունենալ համայնքի զարգացման գործում: Ծրագրի շրջանակում աշակերտները սովորում են, թե ինչպես հիմնել բիզնես ու ծրագիր իրականացնել համայնքային խնդիրները լուծելու համար: 2016-2017 ուսումնական տարում նրանք իրականացրել են ավելի քան 156 համայնքային ծրագիր՝ ավտոբուսի կանգառների կառուցումից մինչև դպրոցի դահլիճների վերանորոգում, թանգարանի հիմնադրումից մինչև եկեղեցու համար նստարանների ձեռքբերում:

Անահիտ Ավագյանը՝ ծրագրին մասնակցած աշակերտ Ողջաբերդ համայնքից, ասում է. «Մովորեցինք կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՄՊ) մասին, և թե ինչու է կարևոր ընկերությունների համար նման ռազմավարություն ունենալը: Մենք մեր ձեռնարկատիրական ծրագրի հասույթի մի մասն ուղղեցինք բացօթյա մարզահրապարակ կառուցելու աշխատանքներին»:

2017թ-ի հունիսին HSBC Holding plc-ը հատկացրել է \$36,750 «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությանը 598 աշակերտի հետ աշխատելու համար: 2009թ-ից ի վեր HSBC-ի ընդհանուր ներդրումը կազմել է \$227,000: HSBC-ի կամավորները նպաստել են ծրագրի իրականացմանը՝ առաջարկելով մասնագիտական ուսուցում և վերապատրաստում՝ այդպիսով օգնելով երեխաներին զարգացնել կարևոր բիզնես հմտություններ:

«Կրթության ոլորտում ներդրումներ կատարելը կարևոր է բարեկեցիկ համայնքներ և զարգացող տնտեսություն կառուցելու համար: Դպրոցական ծրագրում ձեռնարկատիրական կրթության դասընթացի ներառումը նշանավորում է «Պատանեկան նվաճումներ» միջազգային կազմակերպության հետ HSBC-ի տասնամյակներ շարունակվող համագործակցության հերթական հաջողված փուլը: Ծրագիրն օգնում է աշակերտներին վաղ տարիքից սոցիալական ձեռնարկատիրական ոգի ձևավորել և ապագայում իրականացնել կայուն զարգացմանը նպաստող փոփոխություններ: Այն խրախուսում է նրանց արժեքավոր գիտելիքներ ձեռք բերել և նպաստել սոցիալական զարգացմանը, այլ ոչ թե պարզապես շահ հետապնդել»,- նշում է «Հայաստանի պատանեկան նվաճումներ»-ի գործադիր տնօրեն Արմինե Հովհաննիսյանը:

HSBC Բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Փոլ Էդգարը նշում է. «Ձգտելով ներդրում ունենալ համայնքային զարգացման գործում՝ մենք ֆինանսական աջակցություն ենք տրամադրում համայնքային ծրագրերին: Աշխարհի տարբեր երկրներում HSBC-ի բազմաթիվ աշխատողներ ներգրավվում են դասապրոցեսում՝ հատկացնելով իրենց ժամանակն ու փոխանցելով հմտությունները: Շատ երիտասարդների համար կրթությունը կարևոր է բարեկեցիկ կյանք ունենալու համար, որը հնարավորություն է տալիս զարգացնել հմտությունները, իրագործել ներուժն ու նշանակալից ներդրում ունենալ հանրության զարգացման գործում: Այսպիսով, ավելի քան ինը տարի շարունակ HSBC-ն պատիվ է ունեցել աջակցել այս ծրագրին: Մենք վերանայել և վերահաստատել ենք մեր համագործակցությունը, որը կշարունակվի մինչև 2019թ.»:

Հարցումների դեպքում դիմել HSBC Հայաստանի հասարակայնության հետ կապերի գծով մենեջեր Արմինե Բարուրյանին,
Հեռախոս՝ + 374 60 655 345 Էլ. փոստ՝ arminebaburyan@hsbc.com

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբն իր հաճախորդներին ծառայություններ է տրամադրում իր մոտ 3,900 գրասենյակներից, որոնք գտնվում են 67 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,492 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC-ն Հայաստանում

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն «Midland Armenia Bank» ԲԸ անվանումով: 1999թ.-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարներին: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30,000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 9 գրասենյակների և մոտ 420 աշխատակիցների միջոցով: 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 215 միլիարդ ՀՀ դրամ: